

**Մամլո հաղորդագրություն  
Հայ-բրիտանական գործարարության պալատի բացում**

03 հունիսի, 2010 –ին ժամը 18:30-ին Հայ-բրիտանական գործարարության պալատը հրավիրում է գործընկերներին և ՋԼՄ-ներին պալատի բացման արարողությանը, որը տեղի կունենա ՀՀ, ք. Երևան, Նորք Մարաշ փ 5, տուն 27 հասցեում:

Միջոցառմանը հրավիրված են ՀՀ Կառավարության պաշտոնյաներ, ՀՀ-ում Մեծ Բրիտանիայի Դեսպանը և այլ պաշտոնյաներ, բրիտանական և այլ միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչներ, գործարարներ, լրագրողներ:

Կարևորելով Մեծ Բրիտանիայի գործարարների ներգրավվածությունը և հետագա ներդրումները հայկական տարբեր ինդուստրիաներում՝ նախաձեռնվեց Հայ-բրիտանական գործարարության պալատի (ABBC) ստեղծման գործընթացը: Ակտիվ աշխատանքների շնորհիվ արդեն Պալատը պաշտոնապես հիմնադրված է իր 14-ից ավել հիմնադիր անդամներով, որոնք ներկայանում են Հայաստանում գործող բրիտանական և հայկական ընկերություններ:

Պալատի ստեղծման և գործունեության հիմնական նպատակն է իր անդամների ընդհանուր շահերի և իրավունքների պաշտպանությունը և դրանց ներկայացումը Հայաստանի Հանրապետության և Մեծ Բրիտանիայի պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների հետ փոխհարաբերություններում:

Հայ-բրիտանական գործարարության պալատը ծառայելու է որպես գործարար ցանցի մի օղակ, որի նպատակն է խթանել և ուժեղացնել Հայ-Բրիտանական կոմերցիոն կապերը, հրավիրելու և ներգրավելու Բրիտանական ներդրումները Հայաստան և ընդհանուր առմամբ Բրիտանական բիզնես ներկայացուցչությունների հիմնադրմանը Հայաստանում: Այսպիսի պալատների հիմնական նպատակերից է նաև պաշտպանելու բիզնեսների կամ գործարարների շահերը:

Մեր դեպքում Հայ-բրիտանական գործարարության պալատը նույնպես հետապնդում է վերոնշյալ սկզբունքներն ու առաքելությունը և այն հանդես է գալիս, որպես իրավաբանական անձանց միություն, որի կանոնադրությունը մշակվել և հաստատվել է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի պահանջներին համապատասխան:

Պալատի կամ մամլո ասուլիսի վերաբերյալ լրացուցիչ տեղեկությունների համար կարող եք դիմել Արմինե Իսրայելյանին: Հեռ; 091 42 08 29, ել-փոստ [israyelyan@abconnect.am](mailto:israyelyan@abconnect.am):